ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/60

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Մ. Եսայանի (լիազորագիր տրված՝ 05.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8692-2019 գրությամբ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի (հետայսու՝ Պատվիրատու) 22.05.2019թ. թիվ Ε/40/1214-19 գրության պատճենի հիման վրա, 24.05.2019թ. թիվ 26/26-1/8692-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 21.06.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2019/60 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ նկատառումները.

«*Գործի նախապատմությունը և փաստերը*

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ–ն և 25-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը»:

Նույն արձանագրության նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և հրավերով սահմանված պահանջների համաձայն առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով 25.04.2019թ. ուղարկվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. տեղի

ունեցած նիստի թիվ 4 արձանագրության պատճեն, սակայն որևէ ծանուցում՝ շտկում կատարելու վերաբերյալ չի ներկայացվել:

26.04.2019թ. «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել շտկված տեխնիկական բնութագիրը:

29.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար հետևյալ հիմնավորմամբ՝ «Անբավարար/առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա/»:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը նշել է, որ ինչպես արդեն հայտնել էր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը,

նշված չէ անվտանգության դասը»: Նույն արձանագրության նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և հրավերով սահմանված պահանջների համաձայն առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այնուհետև, Գնահատող հանձնաժողովի կողմից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով 25.04.2019թ. ուղարկվել է միայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության պատճեն, սակայն որևէ ծանուցում՝ շտկում կատարելու վերաբերյալ չի ներկայացվել:

Ընկերությունը փորձելով կռահել, թե շտկում կատարելու ժամկետը, և թե շտկման բովանդակությունը՝ 26.04.2019թ. գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր պատկերացմամբ շտկված տեխնիկական բնութագիրը:

Սակայն 29.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար հետևյալ հիմնավորմամբ՝ <<Անբավարար /առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա/>>:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել, որ նշված ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների մի շարք խախտումներ, որի արդյունքում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն կանգնել է <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառվելու վտանգի առջև, մասնավորապես.

Նախ, Կարգի 46-րդ կետը հստակ սահմանում է, որ ապրանքների գնման դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով ընդամենը արձանագրվել է, որ

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը: Մինչդեռ ակնհայտ է, որ նշվածը լոկ վերացական բնույթ է կրում, որից ընդհանրապես հասկանալի չէ, թե կոնկրետ ինչ անհապատասխանություններ են արձանագրվել: Սակայն ինչպես նշվել է, Կարգի 46-րդ կետը իմպերատիվ պահանջում է, որպեսզի անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել: Փաստորեն, գնահատող հանձնաժողովը այդպես էլ չի պարզաբանել, թե Ընկերության կողմից ներկայացված Հավելված 6.1 սահմանված տեխնիկական-բնութագրում և հրավերով նախատեսված տեխնիկական-բնութագրում ինչ պարամետրեր չեն համապատասխանել՝ այդ «գուշակությունը» թողնելով «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին:

Ավելին, մանրամասն չնկարագրելով արձանագրված անհապատասխանությունները, գնահատող հանձնաժողովը խախտել է նաև Կարգի 47-րդ կետը, քանի որ սահմանված կարգով չի ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը ընդամենը սահմանափակվել է «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության պատճեն ուղարկելով, մինչդեռ ինչպես նշվել է, նշված արձանագրությունից ոչ հասկանալի է, թե հստակ ինչը պետք է շտկվեր, ոչ էլ մինչև որ ժամկետը դա պետք է կատարվեր: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նմանատիպ գործեր քննելիս՝ բողոքներ քննող անձանց կողմից միանշանակ որոշվել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկվող արձանագրությունը չի կարող դիտարկվել որպես պատշաճ ծանուցում (թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 և ԳԲՔԱ-ԳՆ-2019/26 որոշումներ): Նման պայմաններում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն շտկում կատարելիս՝ զրկված է եղել հնարավորությունից իրականում պատկերացնել, թե կոնկրետ ինչ շտկում պետք է կատարի և շտկումը կատարել է իր սեփական պատկերացումների վրա հիմնված:

Ընկերությունը հայտնել է, որ ինչ վերաբերում է թիվ 5 արձանագրությամբ՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների, այն է՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար հետևյալ հիմնավորմամբ՝ <<Անբավարար /առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-

րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա/>>, ապա այս կապակցությամբ հայտնում է հետևյալը.

ա) Նախ, գնահատող հանձնաժողովը որպես Ընկերության հայտի մերժման հիմք նշել է, որ առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա: Այս կապակցությամբ նշենք, որ նախ, նման թերություն գնահատող հանձնաժողովի կողմից ի սկզբանե չի արձանագրվել և այս մասով շտկում չի պահանջվել: Բացի այդ, եթե գնահատող հանձնաժողովը ուշադիր գնահատեր շտկված Հավելված 6.1-ը, ապա կարձանագրեր, որ ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա-ի մեջ մտնում է նաև 25 ՄՊա-ն, այսինքն առաջարկվող մինչև 40ՄՊա-ն աշխատում է նաև, օրինակ, մինչև 10, 15, 20, 22, 25 և ավելի բարձր ՄՊա-ի պայմաններում: Ընկերության կողմից առաջարկված ապրանքը բավարարում է տեխնիկական բնութագրով սահմանված պահանջին՝ մինչև 25ՄՊա ճնշմամբ աշխատելուն: Այսինքն, Ընկերության կողմից առաջարկվել է Հրավերով պահանջվող ապրանքից ավելի բարձր որակական հատկանիշներ ունեցող ապրանք, որը որևէ դեպքում չի կարող գնահատվել որպես թերություն:

բ) Գնահատող հանձնաժողովը որպես Ընկերության հայտի մերժման հիմք նշել է նաև, որ առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս: Վերոնշված հանգամանքի վերաբերյալ հայտնում ենք, որ անվտանգության դասի վերաբերյալ Ընթացակարգի հրավերով առկա չէ որևէ նշում՝ 25-րդ չափաբաժնի մասով և գնահատող հանձնաժողովի կողմից չէր կարող արձանագրվել անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, որովհետև Ընկերությունը չէր կարող հրավերի պահանջներից դուրս անհամապատասխանություն շտկեր:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի կողմից հարցում է կատարվել արտադրող ընկերությանը, որի վերաբերյալ 19.06.2019թ. ստացվել է պատասխան /թիվ 0624/354-19 գրություն/, համաձայն որի՝

Мы потверждаем, что предложенное нами товар /Блок 3-х вентильный к Сапфир-22МПС-ДД/ является эквивалентом запрашиваемого клапанного блока: блокирующие клапаны Элемер_БК/С/3/0/АС/3Н/02/Р5/Д/М20/СК.

Ընկերությունը հայտնել է, որ վորոնշված փաստերի և փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հստակ է դառնում, որ նախ՝ գնահատող հանձնաժողովի կողմից մանրամասն չեն նկարագրվել արձանագրված անհամապատասխանությունները, սահմանված կարգով «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին չի ուղարկվել ծանուցում՝ կատարելու շտկում ներկայացված փաստաթղթերում, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի գնահատումը իրականացվել է ոչ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ արտադրող ընկերության՝ “Специальное конструктивное бюро приборы и системы” ООО, կողմից 19.06.2019թ. թիվ 0624/354-19 գրությամբ փաստվել է, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին առաջարկվող 3 փականային բլոկ Сапфир-22МПС-ДД հանդիսանում է հարցվող փականային բլոկի՝ Элемер_БК/С/3/0/АС/3Н/02/Р5/Д/М20/СК համարժեքը:
Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն թույլ չի տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/60 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:27-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.05.2019թ. թիվ Ե/40/1214-19 գրությամբ հայտնել է, որ Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸի կողմից ս/թ. ապրիլի 3-ին հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու տվիչներ: Գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ թիվ 25-րդ չափաբաժնով «Ռաֆ-Օշախ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից, իսկ 16.04.2019թ. թիվ 3 արձանագրությամբ մասնակցից պահանջվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր:

Հրավերով պահանջվող բլոկ արգելափակող փականների Элемер_БК/С/3/0/АС/3Н/02/Р5/Д/М20/СК, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ 12Х18Н10Т կամ համարժեքը ապրանքի համար «Ռաֆ-Օշախ» ՍՊԸ-ն ներկայացրել է բլոկ արգելափակող փականների сапфир-22 МПС-ДД, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ չժանգոտվող պողպատից առաջարկվող ապրանքի նկարագիրը: Գնահատող հանձնաժողովը 23.04.2019թ. նիստի ընթացքում արձանագրել է, որ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ՝ նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը և անվտանգության դասը:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով Ընկերությանը շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որին կցել է նաև արտադրողի կողմից տրամադրված տեխնիկական բնութագիրը:

Պատվիրատուն հայտնել է, որ Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրել է մասնակցի առաջարկը և 29.04.2019թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին, անի որ առաջարկվող ապրանքի անվտանգության

դասը նշված է 4-րդ դաս, իսկ հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25ՄՊա:

Պատվիրատուն հայտնել է, որ առաջնորդվելով Կարգի 32.-րդ կետի 20-րդ ենթակետի և 45-րդ կետի պահանջներով, ներկայացնում է Ընկերության վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 06.06.2019թ. ժամը 10:27-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ՍՑ-ՆԳ-2019/60 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/60 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից տվիչների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ–ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2-րդ արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս տեխնիկական բնութագրում արձանագրվել է

անհամապատասխանություն, այն է՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով Ընկերությանը շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.04.2019թ. ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 25-րդ չափաբաժնի մասով «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8692-2019 գրությունը, Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի 22.05.2019թ. թիվ Ե/40/1214-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Ռաֆ-օջախ» ՍՊԸ-ի 21.06.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի (այսուհետ՝ Օրենք) 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու

օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի

համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից տվիչների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնման գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի թիվ 25-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

25	Բլոկ	արգելափակող փականների Элемер-БК/С/3/0/АС/3Н/02/Р5/Д/М20/СК, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ 12Х18Н10Т կամ համարժեքը

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Ռաֆ-օջախ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2-րդ արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

«Ռաֆ-օջախ» ՍՊԸ-ի կողմից հայտի Հավելված 6.1-ով ներկայացվել է ***բլոկի*** ամբողջական նկարագիրը, որի տեխնիկական բնութագրում նշվել է հետևյալը.

«արգելափակող փականների Сапфир-22, МПС-ДД, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ չժանգոտվող պողպատից»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում տեխնիկական բնութագրում արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ ***առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը:***

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով Ընկերությանը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.04.2019թ. ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը:

«Ռաֆ-օջախ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որպես ապրանքի տեխնիկական բնութագրի շտկում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է հավելված 6.1-ը, որի տեխնիկական բնութագրում նշվել է հետևյալը. «արգելափակող փականների сапфир-22 МПС-ДД, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, անվտանգության 4-րդ դաս, փականների քանակը՝ 3, իրանը՝ չժանգոտվող պողպատից՝ կցելով նաև արտադրողի կողմից տրամադրված տեխնիկական բնութագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 25-րդ չափաբաժնի մասով «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար, այն հիմնավորմամբ, որ առաջարկվող ապրանքի անվտանգության դասը նշված է 4-րդ դաս, հրավերով պահանջվում է 3-րդ դաս, առաջարկվող ապրանքի աշխատանքային միջավայրի ճնշումը մինչև 40ՄՊա է, իսկ հրավերով պահանջվող ապրանքինը՝ մինչև 25 ՄՊա:

Այսպիսով, Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի,

աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով «բլոկ» գնման առարկայի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. արգելափակող փականների Элемер-БК/С/3/0/АС/3Н/02/Р5/Д/М20/СК, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ 12Х18Н10Т կամ համարժեքը:

Ընկերության կողմից Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված կարգով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը. «արգելափակող փականների Сапфир-22, МПС-ДД, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, փականների քանակը՝ 3, իրանը՝ չժանգոտվող պողպատից»:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը:

Ընկերության կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագրի հետևյալ շտկված տարբերակը. «արգելափակող փականների сапфир-22 МПС-ДД, ճնշման փոխակերպիչին իմպուլսային գծերի միացման համար, անվտանգության 4-րդ դաս, փականների քանակը՝ 3, իրանը՝ չժանգոտվող պողպատից՝ կցելով նաև արտադրողի կողմից տրամադրված տեխնիկական բնութագիրը»:

Կարգի 46-րդ կետը սահմանում է, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, ***իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ <u>մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ: Նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 46-րդ կետով սահմանված կարգով մանրամասն չեն նկարագրվել Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում հայտնաբերված անհամապատասխանությունները. մասնավորապես գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չեն հրավերով պահանջվող պարամետրերը, նշված չէ անվտանգության դասը, մինչդեռ հրավերով հաստատված տեխնիկական բնութագրից պարզ չէ, թե Ընկերությունն ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելիս առաջարկվող ապրանքի որ պարամետրերը պետք է ներառի նշված նկարագրի մեջ:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերոհիշյալ պարամետրերը հստակ չի մատնանշել նաև թիվ 4 արձանագրության մեջ՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում անհամապատասխանություններ արձանագրելիս, ինչը և զրկել է Ընկերությանը հայտի թիվ 6.1 հավելվածը պատշաճ կարգով շտկելու հնարավորությունից:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8692-2019 գրությամբ «Ռաֆ-օջախ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**